

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## ԾՐԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2006 ԹՎԱԿԱՆԻ  
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

## Բովանդակություն

Նախաբան.....	3
1. Կարգավորման օրենսդրական դաշտի զարգացում.....	3
2. Կարգավորվող ընկերությունների ֆինանսատնտեսա- կան գործունեության վերլուծություն.....	7
3. Սակագնային քաղաքականություն.....	8
4. Գործունեության լիցենզավորում և թույլտվությունների տրամադրում.....	11
5. Լիցենզավորված գործունեության մոնիթորինգ և վերա- հսկողություն.....	12
6. Ներդրումային դաշտի կարգավորում.....	15
7. Էլեկտրական, ջերմային էներգիայի և բնական գազի սպառման ծավալների կանխատեսում.....	18
8. Սպառողների հետ տարվող աշխատանքներ.....	23
9. Զանգվածային լրատվամիջոցների, հասարակական կազմակերպությունների հետ տարվող աշխատանքներ.....	24
10. Համագործակցություն .....	25

## **Նախաբան**

Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը (ասուհետև՝ հանձնաժողով) էներգետիկայի բնագավառում, ջրային համակարգում և հեռահաղորդակցության (էլեկտրոնային հաղորդակցության) բնագավառում կարգավորող մարմին է, որը գործում է ,Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին, ,էներգետիկայի մասին, ,էլեկտրոնային հաղորդակցության մասին Հայաստանի Հանրապետության օրենքներով և Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքով իրեն վերապահված իրավասությունների շրջանակում:

«Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով հանձնաժողովին վերապահված հեռահաղորդակցության բնագավառի կարգավորման իրավասությունը՝ համաձայն «էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, ուժի մեջ կմտնի 2006 թվականի հունվարի 1-ից:

Հանձնաժողովի կառուցվածքային ստորաբաժանումներն են.

- սակագնային քաղաքականության վարչություն՝
  - ա) սակագնային բաժին,
  - բ) ֆինանսական վերլուծության բաժին,
- իրավաբանական և լիցենզավորման վարչություն,
- լիցենզավորված գործունեության մոնիթորինգի և ներդրումային ծրագրերի վարչություն՝
  - ա) տեխնիկական մոնիթորինգի և փորձաքննության բաժին,
  - բ) ներդրումային ծրագրերի բաժին,
- հեռահաղորդակցության վարչություն,
- սպառողների հետ կապերի բաժին,
- վարչատնտեսական բաժին:

Հանձնաժողովի ստորաբաժանումների աշխատանքը, «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն, համակարգում է հանձնաժողովի աշխատակազմի ղեկավարը:

## 1. Կարգավորման օրենսդրական դաշտի զարգացում

Հանձնաժողովի 2006 թվականի գործունեության ծրագրի կարևորագույն ուղղություններից մեկը կարգավորվող ոլորտների օրենսդրական դաշտի հետագա կատարելագործումն ու զարգացումն է:

Հաշվի առնելով, որ համաձայն «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքի անցումային դրույթների, 2006 թվականի հունվարի 1-ից հանձնաժողովն իրականացնելու է նաև հեռահաղորդակցության բնագավառի կարգավորման գործառույթը, 2006 թվականին հանձնաժողովի առաջնահերթ խնդիրներից մեկը նշված օրենքի կիրարկումն ապահովող իրավական ակտերի մշակումն ու ընդունումն է:

Սկսած 2004 թվականից հանձնաժողովն ակտիվ մասնակցություն է ունեցել «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքի նախագծի քննարկման աշխատանքներին և այժմ արդեն գործուն քայլեր է ձեռնարկում 2006 թվականի հունվարի 1-ից էլեկտրոնային հաղորդակցության բնագավառի կարգավորման անցնելու ուղղությամբ: Այդ առումով, նախ, «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան՝ մրցութային կարգով իրականացվում է կադրերի ընտրությունը և հանձնաժողովի կառուցվածքում ստեղծված հեռահաղորդակցության վարչության համալրումը՝ զուգահեռ շարունակելով կադրերի վերապատրաստման ծրագիրը: Երկրորդ, անցումային շրջանը սահուն կազմակերպելու և հեռահաղորդակցության ոլորտի կարգավորման գործառույթները հանրապետության տրանսպորտի և կապի նախարարությունից հանձնաժողովին փոխանցելու նպատակով ստեղծվել է համատեղ աշխատանքային խումբ և մինչև 2005 թվականի ավարտը, ներգրավելով նաև «Բերինգ Փոյնթ» խորհրդատվական ընկերության մասնագետներին, կկատարվեն համապատասխան աշխատանքներ:

Ելնելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքի պահանջներից, 2006 թվականին նախատեսվող աշխատանքների ցանկը՝ համապատասխան ժամանակացույցով, կընդգրկվի հանձնաժողովի 2006 թվականի տարեկան աշխատանքային ծրագրում:

2006 թվականին շարունակվելու են էներգետիկայի բնագավառի և ջրային համակարգի կարգավորման իրավական դաշտի կատարելագործման և զարգացման աշխատանքները:

Հանձնաժողովը մշտապես ուսումնասիրում է էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի գործունեության ընթացքում ծագող խնդիրները: Առկա խնդիրների կարգավորման, էլեկտրաէներգետիկական շուկայի արդյունավետ գործունեության խթանման, մրցակցային միջավայրի զարգացման և անվտանգության ապահովման նպատակով հանձնաժողովը 2005 թվականին մշակել և հաստատել է հետևյալ փաստաթղթերը.

ա) ելնելով 2004 թվականի դեկտեմբերի 24-ին հանձնաժողովի որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական համակարգի հուսալիության և անվտանգության ապահովման կանոնների» պահանջներից, լրամշակվել է «էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի և էլեկտրաէներգետիկական համակարգի այլ լիցենզավորված ընկերությունների փոխհարաբերությունների կարգը».

բ) լրամշակվել է «Երկդրույք սակագնային համակարգում էլեկտրաէներգիայի (հզորության) առուվաճառքի պայմանագրային հզորությունների սահմանման սկզբունքները», որը կարգավորում է էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի և արտադրողների փոխհարաբերությունները տնօրինելի հզորությունների սահմանման և համակարգի օպերատորի կառավարման գործընթացում:

գ) էլեկտրաէներգիայի արտահանման ընթացքում էլեկտրաէներգետիկական համակարգի լիցենզավորված գործունեություն իրականացնող ընկերությունների առևտրային փոխհարաբերությունները կանոնակարգելու համար մշակվել են արտահանողի և արտադրողի, ինչպես նաև արտադրողի և հաղորդողի, արտահանողի և համակարգի օպերատորի, արտահանողի և հաշվարկային կենտրոնի ծառայություններ մատուցող ընկերությունների միջև առուվաճառքի և ծառայությունների մատուցման, էլեկտրաէներգիայի առուվաճառքի լրացուցիչ (հաշվեկշռող) պայմանագրերի օրինակելի ձևերը.

դ) հաշվի առնելով արտահանման, պայմանագրային և տնօրինելի էլեկտրական հզորությունների սահմանման կարգերի կիրարկման ընթացքում ծագած խնդիրները, դրանցում կատարվել են համապատասխան փոփոխություններ:

Շուկայի կանոնների հետագա զարգացումն ու կատարելագործումն ապահովելու, շուկայի մասնակիցների հարաբերությունները կարգավորելու

նպատակով 2006 թվականին նախատեսվում է մշակել և հաստատել.

ա) էլեկտրաէներգիայի (հզորության) հաշվառման միջոցների տեղադրման և շահագործման կարգը, որի շնորհիվ կկարգավորվեն էլեկտրաէներգետիկական շուկայում գործող ընկերությունների փոխհարաբերությունները էլեկտրաէներգիայի (հզորության) հաշվառման համակարգում կիրառվող հաշվառման համալիրների տեղադրման և շահագործման ընթացքում.

բ) բաշխման համակարգի օպերատորի և արտադրողի, հաղորդողի, սպառողի փոխհարաբերությունների կարգը, որով կկարգավորվեն էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի կառավարմանն ու վարույթին չհանձնված էլեկտրաէներգետիկական համակարգի սարքավորումների (այդ թվում՝ ռելեական պաշտպանության և ավտոմատիկայի) օպերատիվ ենթակայության և այդ սարքավորումների կառավարման ընթացում առաջացող փոխհարաբերությունները:

Հանձնաժողովին վերահասաված լիազորություններից մեկը սպառող-մատակարար հարաբերությունների կարգավորումն է: Հանձնաժողովը մշտապես հետևում և վերլուծում է այդ հարաբերություններում ծագող խնդիրները և դրանց կարգավորման նպատակով համապատասխան քայլեր ձեռնարկում:

Հանրապետությունում իրականացվող գազիֆիկացման բարձր տեմպերը բազմաթիվ խնդիրներ են առաջ բերել բնական գազի մատակարարման ոլորտում: Գազասպառման համակարգի անվտանգության աստիճանի բարձրացման և առկա խնդիրների լուծման նպատակով 2005 թվականին բնական գազի մատակարարման ոլորտում սպառող-մատակարար հարաբերությունները կարգավորող ժամանակավոր կանոնների փոխարեն մշակվել են բնական գազի մատակարարման և օգտագործման նոր կանոններ: Պահպանելով ժամանակավոր կանոններով սահմանված առևտրային հարաբերությունների սկզբունքները, նոր կանոններում ամրագրվել են գազասպառման համակարգի անվտանգության աստիճանի բարձրացմանն ուղղված՝ սպառողների և մատակարարի իրավունքներն ու պարտավորությունները, հստակեցվել են գազամատակարարման ընդհատման, սահմանափակման և դադարեցման դեպքերը, գազամատակարարման վերսկսման ընթացակարգերը, բաժանորդներին տեղեկացման ձևերը և ժամկետները: Ելնելով գազասպառման համակարգում անվտանգության աստիճանի բարձրացման անհրաժեշտությունից, նոր

կանոններում ամրագրվել է այն հիմնարար գաղափարը, որ բնակչության և բազմաբնակարան շենքերում գործող կազմակերպությունների հետ կնքվող միացման, այնուհետև՝ գազամատակարարման պայմանագրերի հիման վրա, միայն մատակարարն է հանդես գալիս այդ համակարգերի նախագծման, կառուցման, կարգաբերման և տեխնիկական սպասարկման աշխատանքների միակ պատվիրատուն և պատասխանատուն, ինչպես նաև իրականացնում հրահանգավորման և պարբերական զննումների գործառույթները:

Ներկայումս «Բնական գազի մատակարարման և օգտագործման կանոնների» պահանջներին համապատասխան, մշակվում են «Մատակարար-սպառող», «Մատակարար-բնակիչ», «Մատակարար-կենցաղային սպառում ունեցող կազմակերպություններ», «Մատակարար-ոչ կենցաղային սպառում ունեցող կազմակերպություններ» պայմանագրերի օրինակելի ձևերը, ինչպես նաև կանոնների կիրարկումն ապահովելու համար անհրաժեշտ մի շարք մեթոդիկաներ:

Հաշվի առնելով էլեկտրական էներգիայի բաշխման լիցենզավորված գործունեություն իրականացնող «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի և սպառողների փոխհարաբերությունների երկու տարվա փորձը և այդ ընթացքում առաջ եկած բազմաթիվ խնդիրների լուծման անհրաժեշտությունը, 2006 թվականին կավարտվեն էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման նոր կանոնների մշակման աշխատանքները:

Ելնելով էլեկտրաէներգիայի մատակարարման և օգտագործման նոր կանոնների պահանջներից, 2006 թվականին կլրամշակվեն և կհաստատվեն էլեկտրաէներգիայի առուվաճառքի մատակարար-սպառող պայմանագրերի օրինակելի ձևերը:

Հանձնաժողովն ակտիվ մասնակցություն է ունեցել «Զրային համակարգի կարգավորման մասին» ՀՀ օրենքի նախագծի և դրանից բխող՝ ՀՀ ջրային օրենսգրքում, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» և մի շարք այլ օրենքներում համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքների նախագծերի մշակման աշխատանքներին:

«Զրային համակարգի կարգավորման մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո հանձնաժողովի 2006 թվականի աշխատանքային ծրագրում կամրագրվեն այդ օրենքով պայմանավորված՝ մշակման ենթակա մի շարք իրավական ակտերի ցանկը և դրանց ընդունման ժամանակացույցը:

## **2. Կարգավորվող ընկերությունների ֆինանսատնտեսական գործունեության վերլուծություն**

Կարգավորվող ընկերությունների ֆինանսատնտեսական գործունեության վերլուծությունը, լինելով հանձնաժողովի կարևորագույն գործառնություններից մեկը, հնարավորություն է տալիս ֆինանսական հաշվետվությունների և տեղեկատվությունների հիման վրա գնահատել ընկերությունների, ինչպես նաև տվյալ բնագավառի ֆինանսական վիճակն ու գործունեության արդյունքները, օժանդակել կարգավորմանը վերաբերող հիմնավորված որոշումների ընդունմանը և սակագների սահմանման ու վերանայման, ներդրումային ծրագրերի իրականացման ընթացքի գնահատման, լիցենզիայի պայմանների վերահսկման նպատակով ստեղծել համապատասխան վիճակագրական տվյալների բազա:

Այդ առումով կարևորվում է կարգավորվող ոլորտների ընկերություններում ազգային հաշվային պլանին համապատասխանող հաշիվների և ենթահաշիվների նոր համակարգի ներդրումը, որը հնարավորություն է ընձեռում հստակ տարանջատել հիմնական (լիցենզավորված) և ոչ հիմնական գործունեության եկամուտներն ու ծախսերը, կատարել եկամուտների և ծախսերի մանրամասն հաշվառում և վերլուծություն:

Այս համակարգն արդեն ներդրվել է էլեկտրաէներգետիկայի և գազամատակարարման բնագավառների ընկերություններում: 2005 թվականի հունվարի 1-ից գազամատակարարման համակարգի ընկերություններում ենթահաշիվների նոր համակարգի ներդրման հետ կապված՝ լրամշակվել և հաստատվել են ֆինանսական հաշվետվության նոր ձևեր:

2005 թվականին լրամշակվել են նաև էներգետիկայի բնագավառում կառուցման կամ վերականգման գործունեության լիցենզիա ունեցող, ջերմային էներգիայի արտադրության, հաղորդման և բաշխման լիցենզիա ունեցող և մինչև 10Մվտ տեղակայված հզորություն ունեցող էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա ունեցող անձանց կողմից ներկայացվող ֆինանսական հաշվետվության նոր ձևերը:

Նշված աշխատանքներն էապես կնպաստեն կարգավորվող ընկերությունների ծախսերի մոնիթորինգի արդյունավետության բարձրացմանը և առավել հիմնավորված սակագների սահմանմանը:

Ֆինանսատնտեսական վերլուծության կազմակերպման և կատարելագործման, ֆինանսական վերլուծության նպատակաուղղվածության և արդյունավետության բարձրացման աշխատանքները շարունակական զարգացում կունենան նաև 2006 թվականին:

Հաշվի առնելով էլեկտրաէներգետիկական և գազամատակարարման



համակարգերում ենթահաշիվների համակարգի ներդրման փորձը, 2006 թվականին աշխատանքներ կտարվեն ջրային համակարգի ընկերություններում ենթահաշիվների համակարգ ներդնելու ուղղությամբ:

### **3. Սակագնային քաղաքականություն**

Կարգավորվող ոլորտում կիրառվող սակագնային քաղաքականությունը հիմնվում է համաշխարհային պրակտիկայում ընդունված անհրաժեշտ հասույթի ապահովման սկզբունքի վրա: Այն ենթադրում է սակագների (ծառայության վճարների) միջոցով բնագավառի բոլոր ընկերությունների համար ձևավորել այնպիսի հասույթ, որը կապահովի նրանց հուսալի, անվտանգ և շարունակական գործունեության համար անհրաժեշտ շահագործման և պահպանման ծախսերի իրականացումը, հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների իրատեսական ծառայության ժամկետներից ելնելով՝ մաշվածության փոխհատուցումը, ինչպես նաև ներգրավված կապիտալի դիմաց ողջամիտ շահույթի ստացումը:

Տնտեսապես հիմնավորված սակագները պետք է ապահովեն բնագավառի կարգավորվող ընկերությունների բնականոն տնտեսական գործունեությունը՝ միաժամանակ հնարավորություն ընձեռելով իրականացնել արդիականացման և հեռանկարային զարգացման ծրագրեր:

Սակագնային քաղաքականությունը առավել հստակ ու թափանցիկ դարձնելու նպատակով հանձնաժողովը, ներգրավելով շահագրգիռ կազմակերպություններին, տարեկան աշխատանքային ծրագրի շրջանակում մշակել և հաստատել է խմելու ջրի մատակարարման, ջրահեռացման և կեղտաջրերի մաքրման, ոռոգման ջրի մատակարարման ծառայությունների մատուցման, ինչպես նաև էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա ունեցող անձանց կողմից առաքվող էլեկտրական էներգիայի սակագների հաշվարկման մեթոդաբանությունները:

Մինչև 2005 թվականի ավարտը կմշակվեն և կհաստատվեն «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից էլեկտրաէներգետիկական համակարգին մատուցվող էլեկտրական էներգիայի հաղորդման ծառայության սակագների հաշվարկման մեթոդաբանությունը և էլեկտրական էներգիայի մանրածախ սակագների հաշվարկման սկզբունքները:

Ընթացիկ տարում հանձնաժողովի կողմից հաստատվել են երկրորդ սակագնային համակարգում գործող էլեկտրակայանների 2005 թվականի պայմանագրային և տնօրինելի էլեկտրական հզորությունները, գազամատակարարման և ջերմամատակարարման համակարգերում լիցենզավորված անձանց կողմից հանձնաժողով ներկայացվող լիցենզավորված գործունեության վերաբերյալ

տեխնիկատնտեսական տեղեկատվությունների ներկայացման կարգերը, լրամշակվել են գործող և կառուցվող փոքր հիդրոէլեկտրակայաններից ներկայացվող տեխնիկատնտեսական տեղեկատվությունների ձևերը:

2005 թվականին մեծածավալ աշխատանք է կատարվել ջրային համակարգի կարգավորվող ընկերությունների սակագների վերանայման հայտերի ուսումնասիրման ուղղությամբ:

Հասարակական կազմակերպությունների մասնակցությամբ հանձնաժողովը ստեղծել է մոնիթորինգի խումբ, որն ուսումնասիրել է Երևան քաղաքի խմելու ջրի սպառման ծավալները: Ամփոփելով մոնիթորինգի արդյունքները և հաշվի առնելով նշված գործոնների ազդեցությունը վերջնական սակագների վրա, սահմանվել են Երևանի «Ջրմուղ-կոյուղի» ՓԲԸ-ի կողմից սպառողներին խմելու ջրի մատակարարման, ջրահեռացման և կեղտաջրերի մաքրման, խմելու ջրի մատակարարման, ջրահեռացման և կեղտաջրերի մաքրման մեծածախ, «Կարեն Դեմիրճյանի անվան մետրոպոլիտեն» ՓԲԸ -ի ստորգետնյա ջրերի հեռացման ծառայությունների մատուցման սակագները ինչպես նաև «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի կողմից սպառողներին խմելու ջրի մատակարարման, ջրահեռացման և խմելու ջրի մատակարարման մեծածախ ծառայությունների մատուցման սակագները:

Սակագների վերանայման անհրաժեշտությունը պայմանավորված է եղել համակարգի անխափան շահագործման, անվտանգության բարձրացման, ինչպես նաև մատուցվող ծառայությունների որակի աստիճանական բարելավման հետ կապված ուղղակի ծախսերի ավելացման, տարեկան արդյունքներով գոյացող ֆինանսական ճեղքվածքի փակման համար պետական բյուջեով նախատեսվող գումարների նվազման, իսկ հետագայում՝ ընդհանրապես բացառման, հաշվառման համակարգի բարելավման և ջրաչափերի տեղադրման հետևանքով սպառման ծավալների նվազման գործոններով:

Հանձնաժողովն ակտիվ մասնակցություն է ունեցել Երևանի «Ջրմուղ-կոյուղի» ՓԲԸ -ի ջրային համակարգը վարձակալության փոխանցելու մրցութային գործընթացների և փաթեթի ստեղծման աշխատանքներին: Մշակվել և հանձնաժողովի որոշմամբ հաստատվել է ապագա վարձակալի գործունեության ծավալման ժամանակահատվածում նրա համար սահմանվող սակագների ճշգրտման կարգը:

2005 թվականին սահմանվել են նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի ապրիլի 8-ի N 573 Ն որոշմամբ «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի կազմից առանձնացված ինքնահոս եղանակով ջրամատակարարում իրականացնող՝ «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Լոռի-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ների կողմից սպառողներին խմելու ջրի մատակարարման և

ջրահեռացման ծառայությունների մատուցման սակագները:

Ուսումնասիրության փուլում է գտնվում «Արմավիրի ջրամատակարար» ՓԲԸ-ի կողմից Արմավիր քաղաքին ոռոգման ջրի մատակարարման սակագնի սահմանման հայտը:

Գործողության ժամկետը լրանալու կապակցությամբ ընթացիկ տարում հանձնաժողովը վերանայել է «Բազենք» ՓԲԸ-ի «Եղեգիս-1» փոքր հիդրոէլեկտրակայանից առաքվող էլեկտրական էներգիայի սակագինը:

Սահմանվել է «Գ.Գ.Վ.» ՍՊԸ -ի նորակառույց «Վարդան ՀԷԿ» փոքր հիդրոէլեկտրակայանից առաքվող էլեկտրական էներգիայի սակագինը:

2005 թվականին մշակվել է հանրային ծառայությունների ոլորտում կարգավորվող գործունեություն իրականացնող անձանց կողմից հանձնաժողով ներկայացվող պարտադիր վճարների հաշվարկման և վճարման վերաբերյալ տեղեկատվության ներկայացման կարգի նախագիծը, որը կհաստատվի «Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո:

Ելնելով «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի պահանջներից՝ հանձնաժողովի մի շարք որոշումներում կատարվել են համապատասխան փոփոխություններ և լրացումներ:

Հաշվի առնելով «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ -ին տրամադրված էլեկտրական էներգիայի բաշխման լիցենզիայի պայմանները, համաձայն որոնց 2006 թվականի հունվարի 1-ից սակագնի հաշվարկում ներառվող էլեկտրաէներգիայի կորուստների մեծությունը նվազեցվելու է մինչև 14%, ինչպես նաև հիմք ընդունելով էլեկտրաէներգիայի արտադրության և սպառման կանխատեսումները և ֆինանսական հաշվետվություններով ներկայացված փաստացի ծախսերի ու իրականացրած կապիտալ ներդրումների վերլուծության արդյունքները, հանձնաժողովը մինչև սույն թվականի դեկտեմբերի 1 -ը կճշգրտի «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ -ի գործող սակագնային մարժայի (վաճառվող և գնվող էլեկտրաէներգիայի սակագների տարբերությունը) մեծությունը: Համապատասխանաբար կվերանայվեն նաև արտադրող կայանների և էլեկտրաէներգետիկական համակարգին ծառայություններ մատուցող ընկերությունների սակագները:

Հիմք ընդունելով հանձնաժողովի կողմից ընդունված սակագների հաշվարկման մեթոդաբանությունները, 2006 թվականին կկատարելագործվեն պահանջվող տեղեկատվությունների ներկայացման ձևերը, դրանց լրացման հրահանգները և համապատասխան կարգերը:

#### **4. Գործունեության լիցենզավորում և թույլտվությունների**

## *տրամադրում*

Հանձնաժողովը 2005 թվականի հունվարի 1-ից մինչև սեպտեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածում տրամադրել է փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցման 20 լիցենզիա (2004 թվականի նույն ժամանակահատվածում տրված 10-ի համեմատությամբ), հողմային էլեկտրակայանի կառուցման մեկ լիցենզիա: Նշված հիդրոէլեկտրակայանների կառուցմամբ կգործարկվի շուրջ 30 ՄՎտ դրվածքային հզորություն և կարտադրվի տարեկան շուրջ 102 միլիոն կՎտժ էլեկտրական էներգիա: Հանձնաժողովն առաջին անգամ տրամադրել է նաև Լոռու մարզի Պուշկինի լեռնանցքի հանդամասում 2640 կՎտ դրվածքային հզորությամբ հողմային էլեկտրակայանի կառուցման լիցենզիա, որը կարտադրի տարեկան շուրջ 5 միլիոն կՎտժ էլեկտրական էներգիա: Այս էլեկտրակայանը Հայաստանի Հանրապետությունում ցանցային հողմաէներգետիկայի առաջնեկն է և մեծ նշանակություն ունի՝ որպես վերականգնվող, բնապահպանական առումով մաքուր էներգետիկական պաշար օգտագործող կայան: Հողմային էլեկտրակայանի կառուցումը կիրագործվի Իրանի Իսլամական Հանրապետության կառավարության կողմից Հայաստանի Հանրապետության կառավարությանը տրամադրված մեկ միլիարդ 575 միլիոն դրամ դրամաշնորհի հաշվին:

2005 թվականի հունվարի 1-ից մինչև սեպտեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածում լիցենզիաների և թույլտվությունների տրման, ինչպես նաև լիցենզավորված անձանց կողմից տարեկան լիցենզիոն տուրքերի վճարման արդյունքում ապահովվել է շուրջ 115 մլն դրամ տարեկան լիցենզիոն տուրքերի գանձում Հայաստանի Հանրապետության պետական բյուջե: Ընդհանուր առմամբ մինչև տարեվերջ նախատեսվում է ապահովել շուրջ 206 մլն դրամ լիցենզիոն տուրքի գանձում:

Փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման համար տրված լիցենզիայի պայմանները չկատարելու պատճառով հանձնաժողովի որոշմամբ «Անի» ԲԲԸ-ի լիցենզիան ուժը կորցրած է ճանաչվել, և 3 մլն դրամ երաշխիքային գումարը, որպես ֆինանսական տույժ, փոխանցվել է ՀՀ պետական բյուջե:

Ի կատարումն ՀՀ ջրային օրենսգրքի պահանջի՝ հաստատվել և սահմանված կարգով ուժի մեջ է մտել «Ջրային համակարգի օգտագործման թույլտվության տրամադրման կարգը», որով սահմանվել են ջրային համակարգում իրականացվող գործունեության բոլոր հնարավոր տեսակները, թույլտվություն ստանալու հայտերի քննարկման և որոշումների ընդունման ընթացակարգերը: Նույն օրենսգրքի պահանջների համաձայն, հանձնաժողովը 2005 թվականին առաջին անգամ

տրամադրել է ջրային համակարգի օգտագործման 4 թույլտվություն՝ Երևանի «Ջրնուղ-կոյուղի», «Լոռի-ջրնուղկոյուղի», «Շիրակ-ջրնուղկոյուղի» և «Նոր-Ակունք» ՓԲԸ-ներին: Մշակվել և հաստատվել են ընկերությունների կողմից իրականացվելիք գործունեության պայմանները, ինչպես նաև Երևանի «Ջրնուղ-կոյուղի» ՓԲԸ-ի ջրային համակարգը վարձակալությամբ փոխանցելու արդյունքում ապագա վարձակալ ընկերությանը տրվող ջրային համակարգի օգտագործման թույլտվության հիմնական պայմանները:

2006 թվականին հանձնաժողովը կշարունակի լիցենզավորման գործընթացը՝ կատարելագործելով կարգավորվող գործունեություն իրականացնող անձանց շահերի հավասարակշռման, նրանց համար գործունեության միատեսակ պայմանների ապահովման մեխանիզմները, որոնք կնպաստեն էներգետիկական պաշարների արդյունավետ օգտագործմանը:

### ***5. Լիցենզավորված գործունեության մոնիթորինգ և վերահսկողություն***

Հանձնաժողովն իր իրավասությունների շրջանակում վերահսկում է կարգավորվող անձանց տրված լիցենզիաների և թույլտվությունների պայմանների պահպանումն ու կատարումը: Այդ նպատակով կազմակերպվում են կարգավորվող ընկերությունների լիցենզիաների և թույլտվությունների պայմաններով նախատեսված գործառույթների իրականացման ընթացքի մոնիթորինգներ և, կատարելով համապատասխան վերլուծություններ, կիրառվում են օրենքով նախատեսված տույժեր, տրվում հայտնաբերված թերություններն ու խախտումները վերացնելու հանձնարարականներ:

Հանձնաժողովի գործառույթներից է նաև սպառողներին մատուցվող ծառայությունների որակի ցուցանիշների գնահատումն ու կարգավորվող ընկերություններին ներկայացվող պահանջների սահմանումն ու դրանց պահպանման վերահսկողությունը, որոնց պատշաճ իրականացմամբ է պայմանավորված ծառայության որակի նկատմամբ այնպիսի պահանջների սահմանումը, որոնք կհամապատասխանեն մատուցվող ծառայության համար սահմանված արժեքին:

Ջրային համակարգում գործունեություն իրականացնող Երևանի «Ջրնուղ-կոյուղի», «Հայջրնուղկոյուղի», «Նոր Ակունք», «Շիրակ-ջրնուղկոյուղի» և «Լոռի-ջրնուղկոյուղի» ՓԲԸ-ների համար արդեն սահմանվել են կենցաղային կարիքների համար խմելու ջրի մատակարարմանը ներկայացվող սպասարկման որակի նվազագույն պահանջները: Հաշվի առնելով, որ ընկերությունների կողմից սպառողների սպասարկման որակի ապահովման հարցը նախկինում չի կանոնակարգվել, հանձնաժողովը որոշումներով ամրագրել է այն նվազագույն

պահանջները, որոնք ընկերությունները իրատեսորեն կարող են և պարտավոր են ապահովել:

Առաջին անգամ Երևանի «Ջրնուղ-կոյուղի» և «Նոր Ակունք» ՓԲԸ-ների համար սահմանվել է ջրամատակարարման օրական տևողության նվազագույն ժամանակահատված՝ 4 ժամ, որի չապահովումը դիտվում է որպես տրված թույլտվության պայմանների խախտում: Բոլոր ընկերությունների համար ամրագրվել են վթարային և պլանային աշխատանքների առավելագույն ժամկետները, ջրամատակարարման գրաֆիկների և դրանցում կատարված փոփոխությունների մասին սպառողներին պարտադիր իրազեկելու մասին դրույթները: Դրույթներ են ամրագրվել նաև մատակարարված խմելու ջրի որակը չափահասելու դեպքերում սպառողներին անհրաժեշտ որակի այլընտրանքային ջուր մատակարարելու, ինչպես նաև բազմաբնակարան շենքերի և առանձնատների մուտքագծերում խմելու ջրի ճնշման առավելագույն և նվազագույն արժեքների վերաբերյալ:

Ջրային համակարգում սպառողների սպասարկման որակի նվազագույն պահանջների սահմանումից հետո հանձնաժողովը 2004-2005 թվականների ընթացքում արդեն երեք անգամ մոնիթորինգ է իրականացրել Երևանի «Ջրնուղ-կոյուղի» ՓԲԸ-ի և մեկ անգամ՝ «Նոր Ակունք» ՓԲԸ-ի կողմից նշված պահանջների պահպանման ուսումնասիրության նպատակով: Մոնիթորինգի ընթացքում վեր են հանվել կենցաղային կարիքների համար խմելու ջրի մատակարարմանը ներկայացվող սպասարկման որակի նվազագույն պահանջների խախտումներն ու բացթողումները, տրվել համապատասխան հանձնարարականներ: Այդ աշխատանքների իրականացմանը ներգրավվել են նաև սպառողների շահերը պաշտպանող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները:

2006 թվականին նախատեսվում է շարունակել ընկերությունների կողմից կենցաղային կարիքների համար սպառողներին խմելու ջրի մատակարարմանը ներկայացվող սպասարկման որակի նվազագույն պահանջների մոնիթորինգը: Առաջին անգամ մոնիթորինգ կիրականացվի «Հայջրնուղկոյուղի», «Շիրակ-ջրնուղկոյուղի» և «Լոռի-ջրնուղկոյուղի» ՓԲԸ-ներում՝ այդ ընկերությունների կողմից սպառողներին մատուցվող ծառայությունների որակը, ինչպես նաև «Շիրակ-ջրնուղկոյուղի» ՓԲԸ-ում ծառայությունների որակին ներկայացվող պահանջների բարելավմանն ուղղված միջոցառումների իրականացման ընթացքն ուսումնասիրելու նպատակով:

Ջրամատակարար ընկերություններում մոնիթորինգի անցկացման ժամկետները և մեխանիզմները կանոնակարգելու նպատակով, հիմնվելով 2004-2005 թվականներին ձեռք բերված փորձի վրա, 2006 թվականին հանձնաժողովը

կսահմանի խմելու ջուր մատակարարող ընկերություններում մոնիթորինգի անցկացման կարգ, որում կամրագրվեն մոնիթորինգի հիմնական ուղղությունները և այն իրականացնելու սկզբունքներն ու մեխանիզմները: Ջրամատակարար ընկերությունների համար կսահմանվեն նաև սպառողների սպասարկման որակի ցուցանիշների վերաբերյալ հանձնաժողով ներկայացվելիք տեղեկատվական ձևեր:

Էլեկտրաէներգետիկայի բնագավառում. «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից սպառողների սպասարկման որակի ցուցանիշների սահմանման նպատակով հանձնաժողովը դեռևս 2004 թվականից սկսել է անհրաժեշտ տեղեկատվական բազայի հավաքագրման աշխատանքները: Այժմ ընկերությունը եռամսյակային հաշվետվություններ է ներկայացնում հանձնաժողով՝ էլեկտրամատակարարման ընդհատումների, սպառողների սահմանազատման կետերում թույլատրելի սահմաններից էլեկտրական էներգիայի լարման շեղման դեպքերի քանակի և տևողության հաշվարկային ցուցանիշների, ինչպես նաև սպառողների կողմից մատակարարին ուղղված դիմում-բողոքների և հարցադրումների վերաբերյալ: Ներկայացված տեղեկատվությունն արդեն հրապարակվում է նաև հանձնաժողովի վեբ կայքի համապատասխան բաժնում:

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ում սպառողների սպասարկման որակի ցուցանիշների մոնիթորինգ իրականացնելու նպատակով հանձնաժողովը 2005 թվականի օգոստոսի 12-ի համապատասխան որոշմամբ հաստատել է «Էլեկտրաէներգետիկայի ոլորտում սպառողներին մատուցվող ծառայությունների որակի մոնիթորինգի կարգը», որը սահմանում է անհրաժեշտ տեղեկատվությունների ստացման, դրանց բովանդակության, սպասարկման որակի ցուցանիշների գնահատման և մոնիթորինգի տվյալների հրապարակման ընթացակարգերը:

2006 թվականին նախատեսվում է ամփոփել «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից սպառողների սպասարկման որակի ցուցանիշների վերաբերյալ հանձնաժողով ներկայացված տեղեկատվության ուսումնասիրության ու վերլուծության արդյունքները և իրականացնել ներկայացված տեղեկատվության հավաստիության գնահատման մոնիթորինգ: Մոնիթորինգի անցկացման սկզբունքների և մեխանիզմների կատարելագործման ուղղությամբ աշխատանքները կիրականացվեն միջազգային փորձագետների, խորհրդատուների և սպառողների շահերը պաշտպանող հասարակական կազմակերպությունների ներկակացուցիչների ներգրավմամբ: Այդ աշխատանքների արդյունքներն ամփոփելուց հետո 2006 թվականին նախատեսվում է՝

- ա) հաստատել էլեկտրաէներգետիկայի ոլորտում սպառողներին մատուցվող ծառայությունների որակի բազիսային ցուցանիշները.

բ) հաստատել էլեկտրաէներգետիկայի ոլորտում սպառողներին մատուցվող ծառայությունների որակի ցուցանիշների նպատակային մեծությունների (կարճաժամկետ և երկարաժամկետ) սահմանման սկզբունքները և մեխանիզմները.

գ) լրամշակել էլեկտրաէներգետիկայի ոլորտում սպառողներին մատուցվող ծառայությունների որակի մոնիթորինգի կարգը:

2006 թվականին աշխատանքներ կտարվեն նաև գազամատակարարման բնագավառի սպառողների սպասարկման որակի ցուցանիշների սահմանման ուղղությամբ: Կմշակվեն և կներդրվեն ընկերությունների կողմից հանձնաժողով ներկայացվող հաշվետվությունների համապատասխան ձևերը և կսկսվի այդ ցուցանիշների սահմանման համար անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրման գործընթացը, կմշակվի և կհաստատվի գազամատակարարման բնագավառի սպառողներին մատուցվող ծառայությունների որակի մոնիթորինգի կարգը:

## ***6. Ներդրումային դաշտի կարգավորում***

Հանձնաժողովի կարևորագույն գործառնություններից է նաև կարգավորվող ընկերությունների կողմից լիցենզավորված գործունեության բարելավման նպատակով հանձնաժողովի համաձայնեցմանը ներկայացված ներդրումային ծրագրերի ուսումնասիրությունը և ապագա սակագների հաշվարկներում դրանց (լրիվ կամ մասնակի) ներառման կամ մերժման վերաբերյալ համապատասխան որոշումների ընդունումը:

Ներդրումային ծրագրերի համաձայնեցման գործընթացը կարգավորվում է հանձնաժողովի 2004 թվականի մայիսի 12-ի համապատասխան որոշմամբ հաստատված «Ներդրումային ծրագրերի համաձայնեցման կարգով»: Նրանում ամրագրված կարճաժամկետ և երկարաժամկետ ներդրումային ծրագրերի, խիստ հրատապ և անհետաձգելի ներդրումների համաձայնեցման ճկուն մեխանիզմները թույլ են տալիս խթանել և հստակ ուղղվածություն տալ կարգավորվող համակարգերի հեռանկարային զարգացման տեսանկյունից առաջնահերթ ներդրումներին, ինչպես նաև ներդրումների և սպասվող տնտեսական արդյունքների ազդեցության գնահատման միջոցով կանխատեսել կարճաժամկետ և երկարաժամկետ ներդրումների ազդեցությունն ապագա սակագների վրա:

Հանձնաժողովը 2005 թվականի փետրվարի 9-ի համապատասխան որոշումներով համաձայնություն է տվել առաջին երկու երկարաժամկետ՝ 2005-2007 թվականներին իրականացվելիք ներդրումային ծրագրերին, որոնք ներկայացվել են էլեկտրաէներգիայի և բնական գազի բաշխման գործունեություն



իրականացնող երկու խոշոր ընկերությունների՝ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» և «Հայրուսգազարդ» ՓԲԸ-ների կողմից:

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ն 2005-2007 թվականների ընթացքում պատրաստվում է իրականացնել շուրջ 19,1 մլրդ դրամի ներդրումներ (առանց ավելացված արժեքի հարկի): 2005-2007 թվականների ներդրումների ծավալը բաշխված է ըստ հետևյալ երեք հիմնական ուղղությունների.

ա) 0,4կՎ լարման բաշխիչ ցանցերի վերակառուցման, վերազինման և ընդլայնման նպատակով կիրականացվեն շուրջ 5,6 մլրդ դրամի ներդրումներ, որոնց արդյունքում կվերակառուցվեն շուրջ 1100 կմ ընդհանուր երկարությամբ օդային և մալուխային գծեր, կփոխարինվեն ծառայության ժամկետը սպառած մի շարք էլեկտրակայանքներ.

բ) 6(10) կՎ և բարձր լարման բաշխիչ ցանցերի վերակառուցման, վերազինման և ընդլայնման նպատակով կիրականացվեն շուրջ 10,8 մլրդ դրամի ներդրումներ, որոնց արդյունքում կվերակառուցվեն շուրջ 6500 ենթակայաններ, 635 կմ ընդհանուր երկարությամբ օդային և մալուխային գծեր, կփոխարինվեն ծառայության ժամկետը սպառած մի շարք այլ էլեկտրակայանքներ.

գ) ընկերության բնականոն գործունեության ապահովման ուղղությամբ կիրականացվեն շուրջ 2,6 մլրդ դրամի ներդրումներ, որոնց արդյունքում ձեռք կբերվեն չափիչ և ստուգիչ սարքավորումներ, կհամալրվի ընկերության մեքենա-մեխանիզմների պարկը և այլն:

«Հայրուսգազարդ» ՓԲԸ-ն նախատեսում է 2005-2007 թվականների ընթացքում իրականացնել շուրջ 32,3 մլրդ դրամի ներդրումներ (առանց ավելացված արժեքի հարկի): 2005-2007 թվականների ներդրումների ծավալը բաշխված է ըստ հետևյալ հինգ հիմնական ուղղությունների.

ա) գազի բաշխման և փոխադրման ցանցերի վերակառուցման և վերազինման նպատակով կիրականացվեն շուրջ 5,0 մլրդ դրամի ներդրումներ, որոնց արդյունքում կկառուցվեն նոր էլեկտրաքիմիական պաշտպանության կայաններ, կվերակառուցվեն մաշված գազատարներ և կփոխարինվեն ծառայության ժամկետը սպառած այլ սարքավորումներ, կբարելավվի հաշվառման համակարգը.

բ) գազի բաշխման և փոխադրման ցանցերում կորուստների նվազեցման նպատակով կիրականացվեն շուրջ 1,1 մլրդ դրամի ներդրումներ, որոնց արդյունքում կորուստները կնվազեն շուրջ 22 մլն խորանարդ մետրի չափով.

գ) գազի բաշխման ցանցի ընդլայնման և նոր բաժանորդների միացման նպատ-

տակով կիրականացվեն շուրջ 12,2 մլրդ դրամի ներդրումներ, որոնց արդյունքում կկառուցվեն շուրջ 1400 կմ ընդհանուր երկարությամբ գազատարներ, և գազի բաշխման ցանցին կմիացվեն 210 հազար նոր բաժանորդներ՝ ընդհանուր քանակը հասցնելով շուրջ 500 հազարի:

- դ) գազի ստորգետնյա պահեստարական-կայանի վերակառուցման և վերագին-ման նպատակով կիրականացվեն շուրջ 11,7 մլրդ դրամի ներդրումներ, որոնց արդյունքում հնարավորություն կընձեռվի պահեստավորվող գազի ծավալն ավելացնել շուրջ 70 մլն խորանարդ մետրով և հասցնել մինչև 150 մլն խորանարդ մետրի, որը սպառման ներկայիս ծավալների դեպքում հնարավորություն կտա միջին հաշվով ապահովել հանրապետության շուրջ մեկ ամսվա գազի պահանջները:
- ե) ընկերության բնականոն գործունեության ապահովման ուղղությամբ կիրականացվեն շուրջ 2,3 մլրդ դրամի ներդրումներ, որոնց արդյունքում կհամալրվի ընկերության մեքենա-մեխանիզմների պարկը, ձեռք կբերվեն ժամանակակից սարքավորումներ՝ գազի արտահոսքերի հայտնաբերման, այլ չափումների իրականացման նպատակով և այլն:

Ներդրումային ծրագրերի իրականացման ճկունության և շարունակականության ապահովման նպատակով հանձնաժողովը նախատեսել է յուրաքանչյուր տարի քննարկել և համաձայնություն տալ նշված երկու ընկերությունների հաջորդ երեք տարիների ներդրումային ծրագրերին: Այս մոտեցումը հնարավորություն կտա, ելնելով ընթացիկ տարում իրականացված աշխատանքների ծավալից և ի հայտ եկած նոր հանգամանքներից, ունենալ հնարավորինս իրատեսական երկարաժամկետ ներդրումային ծրագրեր:

Բացի նշված ընկերություններից ներդրումային ծրագրեր են իրականացնում նաև այլ կարգավորվող ընկերություններ: 2005 թվականին հանձնաժողովի համապատասխան որոշումներով ի գիտություն են ընդունել «Նոր Ակունք», «Բարձրավոլտ էլեկտարացանցեր» և «Համակարգի օպերատոր» ՓԲԸ-ների կողմից միզագազային կազմակերպությունների վարկային միջոցների հաշվին իրականացվելիք ներդրումային ծրագրերը՝ ամրագրելով վարկերի վերադարձման մեխանիզմները և ժամկետները:

2006 թվականին կշարունակվի կարգավորվող ընկերությունների կողմից իրականացվելիք կարճաժամկետ և երկարաժամկետ ներդրումային ծրագրերի ուսումնասիրության և համաձայնեցման գործընթացը, ինչպես նաև, ելնելով կուտակված փորձից, կլրամշակվի գործող «Ներդրումային ծրագրերի համաձայնեցման կարգը»:

Ներդրումային ծրագրերի իրականացման ընթացքի նկատմամբ պատշաճ

հսկողություն իրականացնելու նպատակով հանձնաժողովը պարբերաբար ուսումնասիրություններ և վերլուծություններ է կատարում: Այդ նպատակով հանձնաժողովի 2005 թվականի մայիսի 25-ի համապատասխան որոշմամբ հաստատվել են կատարված ներդրումների մասին կարգավորվող անձանց կողմից հանձնաժողով ներկայացվող հաշվետվությունների միասնական երեք նոր ձևեր: 2005 թվականին ուսումնասիրվել և համապատասխան վերլուծական տեղեկանք է կազմվել «Հայաստանի էլեկտրական ցանցեր» և «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ների կողմից 2004 թվականին իրականացված ներդրումների փաստացի ծավալների մասին:

2006 թվականին նախատեսվում է ուսումնասիրել և վերլուծել կարգավորվող ընկերությունների 2005 թվականի ներդրումային ծրագրերի կատարման ցուցանիշները:

Իրականացվող ներդրումների, ինչպես նաև շահագործման և պահպանման ծախսերի արդյունավետության բարձրացման նպատակով հանձնաժողովը մի շարք կարգավորվող ընկերությունների համար հաստատել է ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնումների կարգեր: Այժմ «Հայաստանի էլեկտրական ցանցեր», «ՀայՌուսգազարդ» և «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ները, «Հրազդանի էներգետիկ կազմակերպություն (ՀրազԶԷԿ) ԲԲԸ-ն և «Տրանսգազ» ՍՊԸ-ն լիցենզավորված գործունեությանը վերաբերող բոլոր գնումներն իրականացնում են հանձնաժողովի կողմից հաստատված գնումների կարգերի համաձայն: Այդ գործընթացի նկատմամբ պատշաճ վերահսկողություն իրականացնելու նպատակով հանձնաժողովը 2005 թվականի հունվարի 21-ի համապատասխան որոշմամբ հաստատել է կատարված գնումների մասին հանձնաժողով ներկայացվող հաշվետվության մեկ միասնական ձև:

2006 թվականին հանձնաժողովը կուսումնասիրի ընկերությունների կողմից նախորդ ժամանակահատվածում գնումների իրականացման մեխանիզմները և անհրաժեշտության դեպքում առաջարկություններ կներկայացնի դրանց կատարելագործման ուղղությամբ:

## **7. Էլեկտրական, ջերմային էներգիայի և բնական գազի սպառման ծավալների կանխատեսում**

Վերլուծելով 2004 թվականին և 2005 թվականի 6 ամիսների ընթացքում արտադրված, հաղորդված և բաշխված էլեկտրական ու ջերմային էներգիայի, ներկրված և բաշխված բնական գազի փաստացի ցուցանիշները, ընկերությունների կողմից ներկայացված նախնական կանխատեսումները, ինչպես

նաև հաշվի առնելով կարգավորվող համակարգերի զարգացման միտումները, հանձնաժողովը կազմել է էլեկտրական, ջերմային էներգիայի և բնական գազի 2005 թվականին սպասվող և 2006 թվականի կանխատեսումային հաշվեկշիռները (աղյուսակներ №№ 1, 2, 3):

Ինչպես երևում է № 1 աղյուսակից, 2006 թվականին «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ում կանխատեսվում է մուտք գործող էլեկտրական էներգիայի ծավալի աճ շուրջ 277 մլն կՎտժ: Միաժամանակ, գերնորմատիվային կորուստների նվազման արդյունքում բաշխիչ ցանցերում էլեկտրական էներգիայի հաշվեգրված սպառումը կավելանա մոտ 286 մլն կՎտժ-ով:

2006 թվականին էլեկտրական էներգիայի ընդհանուր արտադրության մեջ ատոմային էլեկտրակայանի մասնաբաժինը կանխատեսվում է 40,4%, ջերմային էլեկտրակայաններիինը՝ 31,3% և հիդրոէլեկտրակայաններիինը՝ 28,3%:

Երկրորդ աղյուսակում տրված է բնական գազի 2005-2006 թվականների կանխատեսվող հաշվեկշիռը: 2006 թվականին 2005 թվականի համեմատությամբ կանխատեսվում է մոտ 165 մլն խմ բնական գազի ներկրման ծավալի աճ (9,6%), ինչը պայմանավորված է հանրապետությունում գազիֆիկացման աշխատանքների ընդլայնմամբ: 2006 թվականին կանխատեսվում է 1745 մլն խմ բնական գազի առաքում սպառողներին, ինչը 200 մլն խմ-ով կամ 12,9%-ով ավելի է 2005 թվականին սպասվողից: Սպառման հիմնական աճը կանխատեսվում է բնակչության հատվածում՝ 86 մլն խմ, կամ 24,8%:

Երրորդ աղյուսակում տրված է կենտրոնացված ջերմամատակարարման և արդյունաբերական կարիքների համար ջերմային էներգիայի 2005-2006 թվականների կանխատեսվող հաշվեկշիռը: 2006 թվականին 2005 թվականի համեմատությամբ սպասվում է մոտ 50 հազ ԳՋ ջերմային էներգիայի արտադրության նվազում:

**ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ 2005-2006 թթ. ՀԱՇՎԵԿՇԻՌԸ**

	Ցուցանիշի անվանումը	Չափի միավոր	2005 թ. սպասվող	2006 թ. կանխատեսվող
1	<b>Էլեկտրաէներգիայի արտադրություն</b>	մլն կՎտժ	<b>5850</b>	<b>6190</b>
1.1	այդ թվում՝ <b>ՀԱԷԿ</b>	"-	2500	2500
1.2	<b>ՀԷԿ-եր</b>	"-	1670	1755
1.2.1	որից՝ «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ	"-	485	485
1.2.2	«Որոտանի ՀԷԿ» ՓԲԸ	"-	980	1000
1.2.3	Չորա ՀԷԿ	"-	65	65
1.2.4	Մասնավոր փոքր ՀԷԿ-եր	"-	140	205
1.3	<b>ԶԷԿ-եր</b>	"-	1680	1935
1.3.1	որից՝ «Հրազդանի էներգետիկ կազմակերպություն (ՀրազԶԷԿ)»	"-	1310	1540
1.3.2	«Երևանի ԶԷԿ» ՓԲԸ	"-	370	395
2	<b>Էլեկտրաէներգիայի ծախսը սեփական կարիքների համար</b>	մլն կՎտժ	363	383
2.1	Նույնը՝ %-ով տող 1-ի նկատմամբ	%	6,2%	6,2%
3	<b>Առաքում կայաններից</b>	մլն կՎտժ	<b>5487</b>	<b>5807</b>
4	<b>Ներհոսք</b>	մլն կՎտժ	260	260
5	<b>Ընդամենը մուտք բարձր լարման էլեկտրացանցեր</b>	մլն կՎտժ	5747	6067
6	<b>Կորուստները բարձր լարման էլեկտրացանցերում</b>	մլն կՎտժ	86	89
6.1	Նույնը՝ %-ով տող 5-ի նկատմամբ	%	1,5%	1,5%
7	<b>Արտահոսք</b>	մլն կՎտժ	860	900
8	<b>Մուտք «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ</b>	մլն կՎտժ	4801	5078
9	<b>Կորուստները բաշխիչ ցանցերում</b>	մլն կՎտժ	720	711
9.1	Նույնը՝ %-ով տող 8-ի նկատմամբ	%	15%	14%
10	<b>Ներքին սպառում</b>	մլն կՎտժ	<b>4081</b>	<b>4367</b>

## ԲՆԱԿԱՆ ԳԱԶԻ 2005-2006 թթ. ՀԱՇՎԵԿՇԻՈՐ

	Ցուցանիշի անվանումը	Չափի միավոր	2005 թ. սպասվող	2006 թ. կանխատեսվող
1	<b>Բնական գազի ներկրում</b>	մլն ն մ <sup>3</sup>	<b>1720</b>	<b>1885</b>
2	<b>Տեխնոլոգիական կորուստները գազի համակարգում</b>	մլն ն մ <sup>3</sup>	131	129
2.1	Նույնը՝ %-ով տող 1-ի նկատմամբ	%	7,6%	6,8%
3	<b>Գազի ծախսը սեփական կարիքների համար</b>	մլն ն մ <sup>3</sup>	9	11
3.1	Նույնը՝ %-ով տող 1-ի նկատմամբ	%	0,55%	0,56%
4	<b>Մղվել է ստորգետնյա պահեստարաններ</b>	մլն ն մ <sup>3</sup>	80	50
5	<b>Արտանդվել է պահեստարաններից</b>	"-"	45	50
6	<b>Բնական գազի առաքումը սպառողներին որից՝</b>	"-"	<b>1545</b>	<b>1745</b>
6.1	Էներգետիկ համակարգ	"-"	590	650
6.2	Արդյունաբերություն	"-"	343	360
6.3	Բյուջետային կազմակերպություններ	"-"	29	30
6.4	Բնակչություն	"-"	347	433
6.5	Ջեռուցման համակարգ	"-"	1	2
6.6	Այլ սպառողներ	"-"	235	270

**ՋԵՐՄԱՅԻՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ 2005-2006 թթ. ՀԱՇՎԵԿՇԻՈՐ**

	Ցուցանիշի անվանումը	Չափի միավոր	2005 թ. սպասվող	2006 թ. կանխատեսվող
1	<b>Ջերմային էներգիայի արտադրությունը, այդ թվում՝</b>	հազ ԳՋ	<b>1985</b>	<b>1935</b>
1.1	«Երևանի ՋԷԿ» ՓԲԸ	"-"	1634	1701
1.2	«Հրազդանի էներգետիկ կազմակերպություն (ՀրազՋԷԿ)» ԲԲԸ	"-"	351	234
2	<b>Ջերմային էներգիայի կորուստները, այդ թվում՝</b>	հազ ԳՋ	281	237
2.1	«Երևանի ՋԷԿ» ՓԲԸ	"-"	146	153
2.2	«Հրազդանի էներգետիկ կազմակերպություն (ՀրազՋԷԿ)» ԲԲԸ	"-"	135	84
2.3	Նույնը՝ %-ով տող 1-ի նկատմամբ	%	14,2%	12,2%
3.0	<b>Ջերմային էներգիայի օգտակար առաքումը, այդ թվում՝</b>	հազ ԳՋ	<b>1704</b>	<b>1698</b>
3.0.1	«Երևանի ՋԷԿ» ՓԲԸ		1488	1548
3.0.2	«Հրազդանի էներգետիկ կազմակերպություն (ՀրազՋԷԿ)» ԲԲԸ		216	150
3.1	<i>Կենտրոնացված ջեռուցման համար որից՝</i>	"-"	249	234
3.1.1	«Երևանի ՋԷԿ» ՓԲԸ	"-"	33	84
3.1.2	«Հրազդանի էներգետիկ կազմակերպություն (ՀրազՋԷԿ)» ԲԲԸ	"-"	216	150
3.2	<i>Արդյունաբերական կարիքների համար</i>	"-"	1455	1464
3.2.1	«Երևանի ՋԷԿ» ՓԲԸ, այդ թվում՝		1455	1464
3.2.2	«Նաիրիտ գործարան» ՓԲԸ		1455	1464

## **8. Սպառողների հետ տարվող աշխատանքներ**

Ղեկավարվելով «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» ՀՀ օրենքով, պետական քաղաքականության հիմնական սկզբունքներով, հանձնաժողովը մեծ նշանակություն է տալիս սպառողների և էներգետիկայի բնագավառի ու ջրի ոլորտի տնտեսավարող սուբյեկտների իրավունքների պաշտպանության ապահովման և շահերի հավասարակշռման խնդիրներին, սպառողների և կարգավորվող անձանց նկատմամբ խտրականության բացառմանը:

Կարգավորվող անձանց հետ պարբերաբար քննարկումներ են կազմակերպվում սպառողների հարցադրումների, բողոքների, ինչպես նաև սպառողներին ներկայացված վճարման հաշիվների վիճարկման վերաբերյալ:

Հանձնաժողովի համապատասխան ծառայությունը 2005 թվականի սկզբից մինչև սեպտեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածում ստացել է 70 գրավոր բողոք, «Հրատապ հեռախոսով» և քաղաքացիների ընդունելության արդյունքում՝ 265 բողոք և հարցադրում, որոնցում բարձրացված խնդիրներին համապատասխան ընթացք է տրվել: Քննարկումների շրջանակներում, հարցերն ավելի մանրակրկիտ ուսումնասիրելու նպատակով, կատարվել են ստուգայցեր: Շարունակվում է սպառողների շրջանում բացատրական աշխատանքների իրականացումը՝ իրենց իրավունքներին, ինչպես նաև «էներգետիկայի մասին», «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» ՀՀ օրենքներին և դրանցից բխող իրավական ակտերին ծանոթացնելու ուղղությամբ:

Սպառողների մոտ գոհունակություն է առաջացրել ,Հայաստանի էլեկտրական ցանցերե ՓԲԸ-ի հետ համատեղ, Փիեյ Քընսալթինգ գրուպե խորհրդատվական ընկերության և սպառողների շահերի պաշտպանության միության աջակցությամբ նախապատրաստված, տպագրված և անհատույց բաժանված էլեկտրական էներգիա սպառողի և մատակարարի իրավունքներն ու պարտականությունները պարզաբանող «Սպառողի ուղեցույց» բրոշյուրը:

2006 թվականին, միջոցների առկայության դեպքում, նախատեսվում է մշակել և հրապարակել համանման բրոշյուրներ գազամատակարարման և ջրամատակարարման ոլորտների վերաբերյալ:

Հանձնաժողովի կողմից կարգավորվող ոլորտներին վերաբերող ՀՀ օրենքներին և իրավական ակտերին սպառողներին իրազեկելու նպատակով շարունակվելու է հեռուստատեսային հաղորդումների շարքերի կազմակերպումը:



2006 թվականին մարզերում բնակչության իրազեկվածության մակարդակը բարձրացնելու, առկա հիմնախնդիրները վեր հանելու և համապատասխան ընթացք տալու նպատակով նախատեսվում է կազմակերպել մի շարք հանդիպումներ: Մարզպետարանների հետ համատեղ շարունակվելու են աշխատանքները մարզերի բնակչության հետ կապը բարելավելու, էլեկտրոնային փոստով հաղորդակցվելու, հանրային ծառայությունների ոլորտում սպառողների դիմումներին, առաջարկու-թյուններին կապի այս ձևով ընթացք տալու ուղղությամբ:

### ***9. Չանգվածային լրատվամիջոցների, հասարակական կազմակերպությունների հետ տարվող աշխատանքներ***

2006 թվականին հանձնաժողովի մամուլի ծառայությունը զանգվածային լրատվամիջոցների հետ տարվող աշխատանքներում ծրագրում է զարգացնել «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» ՀՀ օրենքում ամրագրված՝ կարգավորման իրականացման հրապարակայնության և թափանցիկության սկզբունքները: Ինչպես 2005 թվականին, այնպես և 2006 թվականի ընթացքում նախատեսվում է կազմակերպել քննարկումներ, սեմինարներ, մամուլ ասուլիսներ, որոնց կմասնակցեն թե՛ հանձնաժողովում հավատարմագրված լրագրողները և թե՛ սպառողների շահերը պաշտպանող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները: Հաշվի առնելով հանրային ծառայությունների ոլորտի կարգավորման գործընթացի բարդությունը, որն իրականացվում է բազմաթիվ ենթաօրենսդրական ակտերի և համաշխարհային պրակտիկայում ընդունված տնտեսագիտական մեթոդների կիրառմամբ, հանձնաժողովը նախատեսում է 2006 թվականին ևս սպառողներին ծառայություններ մատուցող խոշոր ընկերությունների հետ համատեղ կազմակերպել արտագնա սեմինարներ՝ հանրային ծառայությունների ոլորտը լուսաբանող զանգվածային լրատվամիջոցների և սպառողների շահերը պաշտպանող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ:

Կարևորելով կարգավորման գործընթացում հասարակության ներգրավման անհրաժեշտությունը, հաշվի առնելով, որ 2006 թվականի հունվարի 1-ից կարգավորման դաշտում ընդգրկվելու է նաև էլեկտրոնային հեռահաղորդակցության ոլորտը, հանձնաժողովը, ձեռք բերված փորձի հիման վրա, հասարակական կազմակերպությունների և զանգվածային լրատվամիջոցների մասնակցությամբ շարունակելու է կազմակերպել էլեկտրոնային հեռահաղորդակցության ոլորտի առանձնահատկությունների վերաբերյալ հասարակական լսումներ, բանավեճ-քննարկումներ, որտեղ

մասնակիցները հնարավորություն կունենան հանդես գալ ելույթներով, ներկայացնել առաջարկություններ, որոնք հիմնավոր լինելու դեպքում հաշվի կառնվեն հանձնաժողովի կողմից ընդունվելիք որոշումներում:

Ծրագրվում է մամուլի ամենօրյա վերլուծության միջոցով կարգավորվող բնագավառներին առնչվող հարցերի և հիմնախնդիրների վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվություն տրամադրել հանրությանը: Ջանգվածային լրատվամիջոցներով կշարունակվեն հանձնաժողովի անդամների, աշխատակազմի աշխատակիցների կողմից մասնագիտական պարզաբանումները, ճանաչողական բնույթի հաղորդումները, իսկ ուղիղ հեռուստառադիոթերթերների միջոցով կակտիվացվի հանրության հետ հետադարձ կապը:

2006 թվականին նախատեսվում է ընդլայնել հանձնաժողովի էլեկտրոնային էջի հնարավորությունները. կտեղադրվեն հանձնաժողովի որոշումների նախագծերը և ընդունված որոշումները, տնտեսավարող սուբյեկտների լիցենզավորված գործունեության մասին հաշվետվությունները, ինչպես նաև հանձնաժողովի գործունեության վերաբերյալ մամուլում հրապարակված նյութերը:

Ծրագրվում է տպագրել բնական գազի մատակարարման և օգտագործման նոր կանոնները, ջրամատակարարի կողմից սպառողների սպասարկման որակի հիմնական պահանջները, էլեկտրաէներգիա սպառողի և մատակարարի իրավունքներն ու պարտականությունները պարզաբանող, հանձնաժողովի իրավասությունների և պարտականությունների վերաբերյալ բրոշյուրներ, որոնք անվճար կբաժանվեն սպառողներին: Ֆինանսական միջոցների առկայության դեպքում կտպագրվեն նաև սպառողների շահերի պաշտպանությանը վերաբերող գովազդային պաստառներ, հեռուստատեսությամբ կհեռարձակվեն գովազդային հոլովակներ:

## ***10. Համագործակցություն***

Հանձնաժողովն իր առաջնահերթ խնդիրներից և պարտականություններից մեկն է համարում աշխատակազմի ուսուցման ու վերապատրաստման, միջազգային փորձի ուսումնասիրության և ներդրման, փորձի փոխանակման աշխատանքների կազմակերպումը: Այդ առումով հանձնաժողովի մասնագետները Կենտրոնական, Արևելյան Եվրոպայի և Եվրասիայի անդամ երկրների էներգետիկայի կարգավորող հանձնաժողովների տարածաշրջանային ընկերակցության (ERRA) անդամակցության շրջանակներում 2005 թվականին մասնակցել են սակագնային, լիցենզավորման, իրավաբանական կոմիտեների նիստերին, «Ամառային դպրոց» դասընթացին, ընկերակցության տարեկան և ներդրումային հարցերին վերաբերող համաժողովներին:

Սույն թվականի սեպտեմբեր ամսին Երևան քաղաքում հրավիրվել է էներգետիկայի կարգավորող հանձնաժողովների տարածաշրջանային ընկերակցության սակագնային կոմիտեի հերթական նիստը՝ շուրջ 25 երկրների կարգավորող մարմինների ներկայացուցիչների մասնակցությամբ:

«Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» ՀՀ օրենքն ուժի մեջ մտնելուց անմիջապես հետո հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը հեռահաղորդակցության կարգավորման հարցերով սերտորեն համագործակցում է ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (USAID) առևտրային իրավունքի և տնտեսական կարգավորման ծրագրի շրջանակներում գործող ,Բերինգ Փոյնթ խորհրդատվական ընկերության հետ: Հանձնաժողովի մասնագետների որակավորումն այդ ոլորտում բարձրացնելու նպատակով արդեն 2004 թվականից Համաշխարհային բանկի, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության ,Բերինգ Փոյնթ ընկերության, Միջազգային հեռահաղորդակցության ընկերակցության կողմից կազմակերպվում են են մի շարք սեմինարներ տարբեր թեմաներով, մասնավորապես՝

- Առևտրի համաշխարհային կազմակերպության նկատմամբ Հայաստանի Հանրապետության պարտավորությունների կատարումը հեռահաղորդակցության և տեղեկատվության ոլորտում,
- շարժական կապի լիցենզավորման մեթոդաբանություններ,
- հեռահաղորդակցության ոլորտում կարգավորողի կողմից վեճերի լուծում,
- համընդհանուր ծառայություններ և համընդհանուր հասանելիություն,
- սահմանափակ ռեսուրսների արդյունավետ օգտագործում,
- հեռահաղորդակցության և տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման հեռանկարներ:

2005թվականին հանձնաժողովի մեկ աշխատակից մասնակցել է Լոնդոնի Վեստմինստերների համալսարանում կազմակերպված «Հեռահաղորդակցության կարգավորում» եռամսյա դասընթացներին:

Հանձնաժողովը ներգրավված է «Հայաստանի և Եվրամիության միջև գործընկերության և համագործակցության իրականացման ազգային ծրագրի մշակման շրջանակներում» Հայաստանի Հանրապետության և Եվրամիության օրենքների համապատասխանեցմանն ուղղված աշխատանքներում:

2005 թվականի սեպտեմբերին ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության և Կրթությամբ զարգացման ակադեմիայի (AED) աջակցությամբ ու

Ֆինանսավորմամբ նախատեսվում է հանձնաժողովի մասնագետների հերթական այցը ԱՄՆ-ի Քենտուկի նահանգի հասարակական ծառայությունների հանձնաժողով՝ ուսումնասիրելու կարգավորման բնագավառում այդ կառույցի բազմամյա փորձը:

Հանձնաժողովը, իրեն վերապահված իրավասությունների և պարտականությունների շրջանակների ընդլայնմամբ պայմանավորված, անհրաժեշտ է համարում միջազգային փորձի ուսումնասիրումը, և այդ առումով 2006 թվականին նույնպես կշարունակի իր մասնագետների ուսուցման ու վերապատրաստման գործընթացները, ինչպես նաև համագործակցությունը միջազգային կազմակերպությունների և այլ երկրների կարգավորող մարմինների հետ:

2006 թվականին նախատեսվում է հանձնաժողովի մասնագետների մասնակցությունը՝

- էներգետիկայի կարգավորող հանձնաժողովերի տարածաշրջանային ընկերակցության (ERRA) հերթական հանդիպումներին և նիստերին,
- Համաշխարհային բանկի, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության «Բերինգ Փոյնթ» խորհրդատվական ընկերության աջակցությամբ հանձնաժողովի աշխատակազմի համար նախատեսված՝ հեռահաղորդակցության ոլորտին վերաբերող հիմնահարցերի վերաբերյալ մի շարք ուսուցողական միջոցառումների, ինչպես նաև ոլորտի համաժողովներին և այլ հանդիպումներին,
- ԱՄՆ-ի Քենտուկի նահանգի հասարակական ծառայությունների հանձնաժողովի հետ արդեն իսկ ավանդույթ դարձած փորձի փոխանակման հերթական հանդիպումներին,
- ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության և Կրթությամբ զարգացման ակադեմիայի կողմից կազմակերպվող սեմինարներին,
- ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության ,Փիէյ Քընսալթինգ Գրուպե խորհրդատվական ընկերության կողմից կազմակերպվող էներգետիկայի և ջրային համակարգի ոլորտներին վերաբերվող սեմինարներին: